Սույն փաստաթուղթը միայն տեղեկատվական գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

► B

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի 2008/1/ԵՀ հրահանգ

Աղտոտման համալիր կանխման և վերահսկման մասին

(Կոդիֆիկացված տարբերակ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

(ՊՏ L 024, 29.01.2008թ., էջ 8)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Թիվ	էջ	Ամսաթիվ
►M1	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի՝ Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստի 2009 թվականի ապրիլի 23-ի 2009/31/ԵՀ հրահանգով	L 140	114	05.06.2009թ.

▼B

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հունվարի 15-ի 2008/1/ԵՀ հրահանգ

Աղտոտման համալիր կանխման և վերահսկման մասին

(Կոդիֆիկացված տարբերակ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը(1),

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251–րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (2),

Քանի որ

1) Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի «Աղտոտման համալիր կանխման և վերահսկման մասին» 96/61/ԵՀ հրահանգը (3) մի քանի անգամ էապես փոփոխվել է(4): Ելնելով հստակության և ռացիոնալության նկատառումներից՝ նշված Հրահանգը պետք է կոդիֆիկացվի,

2) Համայնքի բնապահպանական քաղաքականության նպատակներն ու սկզբունքները, որոնք ներկայացված են Պայմանագրի 174-րդ հոդվածում, ներառում են, մասնավորապես, աղտոտման կանխում, նվազեցում և, հնարավորության սահմաններում, վերացում՝ առաջնահերթություն տալով աղտոտման աղբյուրների վերահսկմանը և ապահովելով բնական հարստությունների արդյունավետ տնօրինումը՝ համաձայն աղտոտման համար նյութական պատասխանատվության և աղտոտման կանխման սկզբունքների,

3) Շրջակա միջավայրի վերաբերյալ 5-րդ գործողությունների ծրագրում, որի ընդհանուր նախագիծը հավանության է արժանացել Խորհրդի և Խորհրդի շրջանակում հանդիպող անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների կողմից «Բնապահպանական և կայուն զարգացման քաղաքականության ու գործողությունների Համայնքի ծրագրի մասին» 1993 թվականի փետրվարի 1-ի որոշման մեջ (5), առաջնահերթություն տրվեց աղտոտման համալիր վերահսկմանը՝ որպես մարդու գործունեության և սոցիալ–տնտեսական զարգացման միջև մի կողմից, և ռեսուրսների

ու բնության վերականգնողական հնարավորությունների միջև՝ մյուս կողմից, առավել կայուն հավասարակշռություն հաստատելու կարևոր քայլ,

4) աղտոտումը նվազեցնելու միասնական մոտեցումն իրականացնելու համար Համայնքի մակարդակով պահանջվում են գործողություններ՝ արդյունաբերական գործարանների կողմից աղտոտման կանխման ու վերահսկման մասին Համայնքի գործող օրենսդրությունը փոփոխելու և լրացնելու նպատակով,

5) «Արդյունաբերական գործարանների կողմից օդի աղտոտման դեմ պայքարի մասին» Խորհրդի 1984 թվականի հունիսի 28-ի 84/360/ԵՏՀ հրահանգով ներկայացվեց ընդհանուր շրջանակ, որի համաձայն թույլտվություն է պահանջվում արդյունաբերական ձեռնարկությունների շահագործումից կամ էական փոփոխությունից առաջ, եթե դա կարող է աղտոտման պատճառ լինել,

6) «Համայնքի ջրային ավազան որոշ վտանգավոր նյութեր արտանետելու հետևանքով շրջակա միջավայրի աղտոտման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի փետրվարի 15-ի 2006/11/ԵՀ հրահանգով նման նյութերի արտանետումներ կատարելու համար թույլտվություն ստանալու պահանջ է նախատեսվում,

7) չնայած Համայնքի օրենսդրությամբ օդի աղտոտման դեմ պայքար և ջրային ռեսուրսներ վտանգավոր նյութերի արտանետումների կանխում կամ նվազեցում է նախատեսվում, Համայնքի դեռևս այնպիսի համեմատական օրենսդրություն չկա, որն ուղղված լինի հողային ռեսուրսներ արտանետվող նյութերի կանխմանը կամ նվազեցմանը,

8) մթնոլորտ, ջրային կամ հողային ռեսուրսներ աղտոտող նյութերի արտանետումը վերահսկելու նկատմամբ տարբեր մոտեցումները կարող են նպաստել շրջակա միջավայրի տարբեր ավազանների աղտոտմանը՝ դրա ամբողջական պաշտպանության փոխարեն,

9) աղտոտման նկատմամբ միասնական մոտեցման նպատակը աղտոտող նյութերի արտանետումները մթնոլորտ, ջրային կամ հողային ռեսուրսներ կանխելն է այն դեպքերում, երբ դա հնարավոր է՝հաշվի առնելով թափոնների կառավարումը, իսկ երբ հնարավոր չէ, նվազեցնել դրանք՝ շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության

ավելի բարձր մակարդակ հաստատելու նպատակով,

10) սույն Հրահանգով պետք է ստեղծվի ընդհանուր շրջանակ՝ աղտոտման համալիր կանխման և վերահսկման համար: Հրահանգում պետք է սահմանվեն շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության բարձր մակարդակ հաստատելու նպատակով աղտոտման համալիր կանխումն ու վերահսկումն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցները: Կայուն զարգացման սկզբունքի կիրառմանը պետք է նպաստի աղտոտման վերահսկման նկատմամբ միասնական մոտեցումը,

11) սույն Հրահանգի դրույթները պետք է կիրառվեն՝ չսահմանափակելով Խորհրդի 1985 թվականի հունիսի 27-ի «Որոշ պետական և մասնավոր ծրագրերի՝շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունների գնահատման մասին» 85/337/ԵՏՀ հրահանգի դրույթները: Եթե թույլտվության տրամադրման համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ հրահանգի կիրառման արդյունքում ձեռք բերված տվյալները կամ եզրակացությունները, սույն Հրահանգը չպետք է ազդի 85/337/ԵՏՀ հրահանգի իրականացման վրա,

12) անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ քայլեր՝ ապահովելու համար, որ սույն Հրահանգում նշված արդյունաբերական գործունեությամբ զբաղվող անձը համապատասխանում է որոշակի հիմնական պարտավորությունների ընդհանուր սկզբունքներին: Այդ նպատակով իրավասու մարմինները թույլտվության տրամադրման պայմանները սահմանելիս կարող են հաշվի առնել միայն այդ ընդհանուր սկզբունքները,

13) սույն Հրահանգի համաձայն ընդունված որոշ սկզբունքներ պետք է կիրառվեն ներկայումս գործող ձեռնարկությունների նկատմամբ 2007 թվականի հոկտեմբերի 30-ից հետո, իսկ մյուսները պետք է կիրառվեին 1999 թվականի հոկտեմբերի 30-ից սկսած,

14) աղտոտման խնդիրներն առավել արդյունավետորեն լուծելու նպատակով ձեռնարկության շահագործողը պետք է հաշվի առնի բնապահպանական հայեցակետերը: Այդ հայեցակետերի մասին անհրաժեշտ է տեղեկացնել իրավասու մարմնին կամ մարմիններին, որպեսզի վերջիններս թույլտվությունը տրամադրելուց առաջ կարողանան համոզվել, որ ձեռնարկվել են բոլոր համապատասխան

կանխարգելիչ կամ աղտոտումը վերահսկելու միջոցները: Դիմումը ներկայացնելու տարբեր ընթացակարգեր կարող են առաջ բերել շրջակա միջավայրի պահպանության և հանրության իրազեկության տարբեր մակարդակներ: Հետևաբար, թույլտվություն ստանալու մասին սույն Հրահանգով սահմանված դիմումները պետք է նվազագույն տվյալներ պարունակեն,

15) թույլտվության տրամադրման ընթացակարգի և պայմանների ամբողջական համապատասխանումն իրավասու մարմինների շրջանում պետք է հնարավոր դարձնի շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության հնարավոր ամենաբարձր մակարդակի հաստատումը,

16) իրավասու մարմինը կամ մարմինները պետք է թույլտվություն տրամադրեն կամ փոփոխեն այն միայն այն ժամանակ, երբ սահմանված կլինեն մթնոլորտի, ջրային և հողային ռեսուրսների համալիր պահպանության համար նախատեսված միջոցները,

17) թույլտվության մեջ պետք է նշվեն բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են թույլտվության տրամադրման պայմանները բավարարելու համար՝այդպիսով նպաստելով շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության բարձր մակարդակի հաստատմանը: Չհակասելով թույլտվության տրամադրման ընթացակարգին՝ այդ միջոցները կարող են ենթակա լինել նաև ընդհանուր պարտադիր պահանջներին,

18) արտանետումների սահմանաքանակները, պարամետրերը կամ համարժեք տեխնիկական միջոցները պետք է հիմնված լինեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների վրա՝ առանց նախատեսելու մեկ որոշակի տեխնիկայի կամ տեխնոլոգիայի կիրառումը և հաշվի առնելով համապատասխան ձեռնարկության տեխնիկական առանձնահատկությունները, դրա աշխարհագրական դիրքը և տեղի բնապահպանական պայմանները: Բոլոր դեպքերում թույլտվության տրամադրման պայմաններով պետք է սահմանվեն դրույթներ աղտոտող նյութերի՝ հեռու տարածությունների և անդրսահմանային տեղափոխման նվազեցման մասին ու ապահովեն շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության բարձր մակարդակը,

19) անդամ պետությունները պետք է իրենք որոշեն, թե ինչպես է հնարավոր,

անհրաժեշտության դեպքում, հաշվի առնել համապատասխան ձեռնարկության տեխնիկական առանձնահատկությունները, աշխարհագրական դիրքը և տեղի բնապահպանական պայմանները,

20) եթե շրջակա միջավայրի որակի ստանդարտի համաձայն պահանջվում են ավելի խիստ պայմաններ, քան այն պայմանները, որոնք կիրագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրման դեպքում, լրացուցիչ պայմանները պետք է, սահմանվեն թույլտվությամբ՝ չհակասելով, մասնավորապես, մնացած այն միջոցներին, որոնք կարող են ձեռնարկվել՝ շրջակա միջավայրի որակի ստանդարտներին համապատասխանությունն ապահովելու համար,

21) քանի որ լավագույն հասանելի տեխնոլոգիաները փոխվում են ժամանակի ընթացքում՝ հաշվի առնելով, մասնավորապես, տեխնոլոգիական առաջընթացը, իրավասու մարմինները պետք է դիտանցեն նման առաջընթացը կամ տեղեկացվեն դրա մասին,

22) Կառուցվածքի փոփոխությունները կարող են աղտոտման պատճառ լինել: Իրավասու մարմինը կամ մարմինները պետք է, հետևաբար, տեղեկացվեն ցանկացած այն փոփոխման մասին, որը կարող է ազդել շրջակա միջավայրի վրա: Էական փոփոխությունների համար պետք է տրամադրվի նախնական թույլտվություն՝ սույն Հրահանգի համաձայն,

23) թույլտվության տրամադրման պայմանները պետք է պարբերաբար վերանայվեն և, անհրաժեշտության դեպքում, թարմացվեն: Որոշ պայմանների պահպանմամբ՝ դրանք պետք է վերաքննվեն,

24) հասարակության արդյունավետ մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին հնարավորություն է տալիս հասարակությանն արտահայտելու, իսկ որոշում կայացնողներին՝ հաշվի առնելու կարծիքներ և դիտողություններ, որոնք կարող են կարևոր լինել տվյալ որոշումների համար՝ դրանով իսկ բարձրացնելով որոշումների ընդունման գործընթացի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը և նպաստելով բնապահպանական խնդիրների մասին հանրության իրազեկությանն ու ընդունված որոշումների օժանդակությանը: Մասնավորապես, հասարակությանը պետք

է հասանելի լինեն կառուցվածքների շահագործման և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր ազդեցությունների մասին տեղեկությունները, իսկ ցանկացած որոշման ընդունումից առաջ՝ այն տեղեկությունները, որոնք վերաբերում են նոր կառուցվածքների շահագործման կամ էական փոփոխությունների թույլտվության դիմումներին և թույլտվություններին, դրանց թարմացմանն ու համապատասխան դիտանցման տվյալներին,

25) մասնակցությունը, այդ թվում՝խմբավորումների, կազմակերպությունների և խմբերի, մասնավորապես, շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող հասարակական կազմակերպությունների մասնակցությունը, պետք է համապատասխանաբար խրախուսվի՝ ներառյալ հանրության բնապահպանական կրթությունը խթանելու միջոցով,

26) 1998 թվականի հունիսի 25-ին Համայնքը ստորագրեց «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիան (Օրհուսի կոնվենցիա): Օրհուսի կոնվենցիայի նպատակներից է երաշխավորել շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության իրավունքները՝ մարդու առողջության և բարեկեցության համար նպաստավոր շրջակա միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությանը նպաստելու նպատակով,

27) զարգացումը և Համայնքի մակարդակով լավագույն հասանելի տեխնոլոգիաների մասին տեղեկատվության փոխանակումը պետք է նպաստի Համայնքի ներսում տեխնոլոգիական անհամապատասխանության վերացմանը, պետք է խթանի Համայնքում կիրառվող սահմանաքանակների և տեխնոլոգիաների կիրառումն ամբողջ աշխարհում և պետք է օգնի անդամ պետություններին սույն Հրահանգի արդյունավետ իրականացման ընթացքում,

28) սույն Հրահանգի իրականացման և արդյունավետության մասին հաշվետվությունները կանոնավորապես են կազմվում,

29) սույն Հրահանգը վերաբերում է այն կառուցվածքներին, որոնք առաջ են բերում մեծ ծավալներով աղտոտում և, հետևաբար, նաև անդրսահմանային աղտոտում: Անդրսահմանային խորհրդակցությունները պետք է կազմակերպվեն այն դեպքերում, երբ դիմումները վերաբերում են նոր կառուցվածքների լիցենզավորմանը կամ կառուցվածքների էական փոփոխություններին, որոնք կարող են շրջակա միջավայրի վրա զգալի բացասական ազդեցություններ ունենալ: Նման առաջարկներին կամ էական փոփոխություններին վերաբերող դիմումները պետք է հասանելի լինեն այն պետության հասարակությանը, որը կարող է ազդեցություններ կրել,

30) Համայնքի մակարդակով կարող է որոշվել գործողությունների անհրաժեշտություն՝ սույն Հրահանգով կարգավորվող կառուցվածքների և աղտոտող նյութերի որոշ տեսակների արտանետումների սահմանաքանակները սահմանելու նպատակով, Եվրոպական պառլամենտը և Խորհուրդը պետք է սահմանեն արտանետումների նման սահմանաքանակներ՝ Պայմանագրի դրույթների համաձայն,

31) սույն հրահանգի դրույթները պետք է կիրառվեն՝ չսահմանափակելով Համայնքի դրույթները աշխատանքի վայրում առողջության պահպանման և անվտանգության մասին,

32) սույն Հրահանգը չպետք է հակասի VI հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգների փոխատեղման ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին.

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Նպատակն ու գործողության ոլորտը

Սույն Հրահանգի նպատակը 1-ին հավելվածում նշված գործունեության հետևանքով առաջ բերված աղտոտման կանխումն ու վերահսկումն իրականացնելն է: Հրահանգով

սահմանվում են նշված գործունեության հետևանքով մթնոլորտ, ջրային և հողային ռեսուրսներ արտանետումների կանխման, իսկ երբ դա հնարավոր չէ, նվազեցման համար նախատեսված միջոցառումներ՝ ներառյալ թափոններին վերաբերող միջոցառումներ՝ շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության բարձր մակարդակ հաստատելու նպատակով՝ չհակասելով 85/337/ԵՏՀ հրահանգին և Համայնքի մյուս համապատասխան դրույթներին:

Հոդված 2

Հասկացությունները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

1. «նյութ» նշանակում է ցանկացած քիմիական տարր և դրա միացությունները՝ բացառությամբ ռադիոակտիվ նյութերի՝ իոնացնող ճառագայթման վտանգներից աշխատողների և հասարակության առողջության պաշտպանության նպատակով անվտանգության հիմնական չափորոշիչներ սահմանող՝ Խորհրդի 1996 թվականի մայիսի 13-ի 96/89/Եվրատոմ հրահանգի (9) իմաստով, և գենետիկորեն փոփոխված օրգանիզմների՝ Խորհրդի 1990 թվականի ապրիլի 23-ի «Գենետիկորեն փոփոխված միկրոօրգանիզմների օգտագործման մասին» 90/279/ԵՏՀ հրահանգի (10) ու Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի մարտի 12-ի «Շրջակա միջավայր գենետիկորեն փոփոխված օրգանիզմները միտումնավոր արտանետելու մասին» 2001/18/ԵՀ հրահանգի (11) իմաստով.

2. «աղտոտում» նշանակում է մարդու գործունեության հետևանքով նյութերի, տատանումների, տաքության կամ աղմուկի անմիջական կամ ոչ անմիջական ներմուծում մթնոլորտ, ջրային կամ հողային ռեսուրսներ, որը կարող է վնասակար լինել մարդու առողջության կամ շրջակա միջավայրի որակի համար, վնաս հասցնել նյութական գույքին կամ որոշակի ազդեցություն ունենալ գեղագիտական արժեքների և շրջակա միջավայրի այլ օրինական կիրառությունների վրա.

3. «կառուցվածք» նշանակում է ստացիոնար արդյունաբերական կառույց, որտեղ իրականացվում են 1-ին հավելվածում նշված գործունեության մեկ կամ ավելի տեսակներ

կամ դրա հետ անմիջական կապ ունեցող այլ գործունեություն, որը տեխնիկապես կապված է այդ տարածքում իրականացվող գործունեության հետ, և որը կարող է որոշակի ազդեցություն ունենալ արտանետումների ու աղտոտման վրա.

4. «գործող կառուցվածք» նշանակում է այնպիսի ձեռնարկություն, որը 1999 թվականի հոկտեմբերի 30-ին, համաձայն այդ ամսաթվից առաջ գործող օրենսդրության, շահագործվել է կամ ստացել է շահագործման լիազորություն կամ իրավասու մարմնի որոշմամբ ենթակա է եղել թույլտվության պահանջին, եթե համապատասխան կառուցվածքը շահագործվել է 2000 թվականի հոկտեմբերի 30-ից ոչ ուշ.

5. «արտանետում» նշանակում է կառուցվածքի մեկ կամ տարբեր աղբյուրներից նյութերի, տատանումների, տաքության կամ աղմուկի անմիջական կամ ոչ անմիջական ներմուծում մթնոլորտ, ջրային կամ հողային ռեսուրսներ.

6. «արտանետումների սահմանաքանակներ» նշանակում է քանակ՝ արտահայտված որոշ պարամետրերով, կոնցենտրացիաներով և(կամ) այնպիսի մակարդակով, որը չի կարող գերազանցվել մեկ կամ ավելի ժամկետների ընթացքում. արտանետումների սահմանաքանակները կարող են նաև սահմանվել նյութերի որոշ խմբերի, ընտանիքների կամ տեսակների համար, մասնավորապես այն նյութերի համար, որոնք նշված են 3-րդ հավելվածում: Նյութերի արտանետումների սահմանաքանակները սովորաբար կիրառվում են կառուցվածքներից նյութերի արտանետումներ կատարելիս, երբ սահմանաքանակները սահմանելիս հաշվի չի առնվել նոսրացումը: Հաշվի առնելով ջրային ռեսուրսներ ոչ անմիջական արտանետումները՝ կառուցվածքի համար արտանետումների սահմանաքանակներ սահմանելիս հնարավոր է հաշվի առնել ջրերի մշակման սարքավորումների ազդեցությունը՝ պայմանով, եթե երաշխավորվում է շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության համարժեք մակարդակը, և եթե դա չի հանգեցնում շրջակա միջավայրի աղտոտման ավելի բարձր մակարդակների՝ չհակասելով 2006/11/ԵՀ հրահանգին կամ այն իրականացնող հրահանգներին.

7. «շրջակա միջավայրի որակի չափորոշիչ» նշանակում է այնպիսի պահանջներ, որոնց որոշակի ժամանակահատվածում պետք է համապատասխանի տվյալ շրջակա միջավայրը կամ դրա մի մասը՝ համաձայն Համայնքի օրենսդրության.

8. «իրավասու մարմին» նշանակում է անդամ պետությունների իրավական ակտերի համաձայն՝ սույն Հրահանգից բխող պարտականություններն իրականացնելու համար պատասխանատու մարմին կամ մարմիններ.

9. «թույլտվություն» նշանակում է գրավոր որոշման (կամ մի քանի նման որոշումների) մի մասը կամ ամբողջը, որով լիցենզավորում է տրվում ամբողջ կառուցվածքի կամ դրա մի մասի շահագործման համար՝ համաձայն այն պայմանների, որոնցով երաշխավորվում է կառուցվածքի համապատասխանությունը սույն Հրահանգի պահանջներին: Թույլտվությունը կարող է ներառել մեկ կամ ավելի կառուցվածքներ կամ կառուցվածքների որոշակի մասեր միևնույն տարածքում, որոնք շահագործվում են միևնույն օպերատորի կողմից.

10. «շահագործման փոփոխություն» նշանակում է կառուցվածքի գործարկման կամ բնույթի փոփոխություն կամ կառուցվածքի ընդլայնում, որը կարող է ազդեցություններ ունենալ շրջակա միջավայրի վրա.

11. 11.«էական փոփոխություն» նշանակում է շահագործման փոփոխություն, որը, իրավասու մարմնի կարծիքով, կարող է զգալի բացասական ազդեցություններ ունենալ մարդկանց կամ շրջակա միջավայրի վրա. սույն սահմանման նպատակներով՝ շահագործման ցանկացած փոփոխություն կամ ընդլայնում համարվում է էական, եթե փոփոխությունը կամ ընդլայնումը գերազանցում է 1-ին հավելվածում նշված սահմանները՝ նման սահմանների առկայության դեպքում.

12. «լավագույն հասանելի տեխնոլոգիա» նշանակում է որոշակի գործունեության և այդ գործունեության իրականացման մեթոդների զարգացման ամենաարդյունավետ և ամենակատարելագործված փուլ, որով նշվում է որևէ տեխնոլոգիայի գործնական համապատասխանությունը՝ արտանետումների սահմանաքանակների հիմք ծառայելու համար, որոնք նախատեսված են կանխելու, իսկ այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, ընդհանուր առմամբ նվազեցնելու արտանետումները և դրանց ազդեցությունն ամբողջ շրջակա միջավայրի վրա.

ա) տեխնոլոգիան ընդգրկում է և՝ օգտագործվող տեխնոլոգիան, և՝ ձեռնարկության նախագծման, պատրաստման, պահպանման, շահագործման և շահագործման դադարեցման եղանակը.

բ) «հասանելի տեխնոլոգիա» նշանակում է տեխնոլոգիա, որն արտադրված է այնպիսի ծավալներով, որի դեպքում հնարավոր է դրա շահագործումը համապատասխան արդյունաբերական սեկտորում տնտեսապես և տեխնիկապես իրագործելի պայմաններում՝ հաշվի առնելով ծախսերը և եկամուտները՝ անկախ այն հանգամանքից, թե տեխնոլոգիան օգտագործվում է կամ արտադրվում տվյալ անդամ պետության տարածքում, քանի դեռ այն համապատասխան պայմաններով հասանելի է օպերատորին.

գ) «լավագույն» նշանակում է ամենաարդյունավետ տեխնոլոգիան՝ շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության բարձր մակարդակն ապահովելու համար.

Հասանելի լավագույն տեխնոլոգիան որոշելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել 4-րդ հավելվածում նշված կետերին.

13. «օպերատոր» նշանակում է որևէ կառուցվածք շահագործող կամ վերահսկող, կամ կառուցվածքի տեխնիկական շահագործման բացառիկ տնտեսական լիազորություն ունեցող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

14. «հասարակություն» նշանակում է մեկ կամ ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք և, ազգային օրենսդրության կամ պրակտիկայի համաձայն, նրանց խմբավորումները, կազմակերպությունները և խմբերը.

15. «շահագրգիռ հասարակություն» նշանակում է հասարակություն, որի վրա ազդել է կամ կարող է ազդել թույլտվություն տրամադրելու կամ այն վերանայելու կամ թույլտվության պայմանները սահմանելու կամ վերանայելու մասին որոշումների ընդունումը, կամ որը հետաքրքրված է դրանով. սույն սահմանման նպատակներով՝ շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող և ազգային օրենսդրության պահանջները բավարարող կազմակերպությունները համարվում են շահագրգիռ.

Հոդված 3

Օպերատորի հիմնական պարտավորությունները կարգավորող ընդհանուր սկզբունքները

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ապահովելու համար, որ իրավասու մարմինները երաշխավորում են կառուցվածքների շահագործումն այնպիսի եղանակով, որի դեպքում՝

ա) ձեռնարկվում են աղտոտման համապատասխան բոլոր կանխարգելիչ միջոցառումները, մասնավորապես, հասանելի լավագույն տեխնոլոգիաների օգտագործման միջոցով.

բ) շրջակա միջավայրն էականորեն չի աղտոտվում.

գ) հնարավոր է խուսափել թափոններից՝ համաձայն Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5-ի «Թափոնների մասին» 2006/12/ԵՀ հրահանգի (12), թափոնները հնարավոր է վերականգնել, կամ եթե դա տեխնիկապես և տնտեսապես անհնար է, թափոնները հնարավոր է հեռացնել կամ նվազեցնել դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա.

դ) էներգիան արդյունավետորեն է օգտագործվում.

ե) ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցները՝ վթարներից խուսափելու և դրանց հետևանքները նվազեցնելու համար.

զ) ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ գործունեության դադարեցման առումով՝ աղտոտման ռիսկերից խուսափելու և շահագործման տարածքում բարենպաստ վիճակ վերահաստատելու նպատակով.

2. Սույն հոդվածին համապատասխանումն ապահովելու համար անդամ պետությունները կարող են միայն ապահովել, որ իրավասու մարմինները թույլտվության պայմանները սահմանելիս հաշվի առնեն 1-ին պարբերության մեջ նշված հիմնական սկզբունքները:

Հոդված 4

Թույլտվություններ նոր կառուցվածքների շահագործման համար

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ ոչ մի կառուցվածք չի շահագործվում առանց սույն Հրահանգի համաձայն տրամադրված թույլտվության՝ չհակասելով Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի «Աղբի այրման խոշոր գործարաններից որոշ աղտոտող նյութերի մթնոլորտ արտանետումների նվազեցման մասին» 2001/80/ԵՀ հրահանգի (13) համաձայն:

Հոդված 5

Գործող կառուցվածքներին թույլտվությունների տրամադրման պահանջները

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ իրավասու մարմինները 6-րդ և 8-րդ հոդվածներում նշված թույլտվություններ տրամադրելու, պայմանները վերանայելու և, անհրաժեշտության դեպքում, թարմացնելու միջոցով ապահովեն, որ գործող կառուցվածքները շահագործվեն 3-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ,13-րդ, 14(ա) ու (բ) և 15(2) հոդվածների համաձայն՝ սկսած 2007 թվականի հոկտեմբերի 30-ից ոչ ուշ՝ չհակասելով Համայնքի օրենսդրությանը:

2. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ 1-ին, 2-րդ, 11-րդ, 12-րդ, 14(գ), 15(1) ու (3), 17-րդ, 18-րդ և 19(2) հոդվածների դրույթները գործող կառուցվածքների նկատմամբ կիրառելու համար՝ սկսած 1999 թվականի հոկտեմբերի 30-ից:

Հոդված 6

Թույլտվություն ստանալու մասին դիմումները

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ իրավասու մարմին ներկայացված թույլտվություն ստանալու մասին դիմումի մեջ նշված են՝

ա) կառուցվածքի և դրա գործունեության նկարագրությունը.

բ) այն հումքի, օժանդակ նյութերի, այլ նյութերի և էներգիայի նկարագրությունը, որոնք օգտագործվում են կառուցվածքում կամ առաջանում դրա շահագործումից.

գ) կառուցվածքներից արտանետվող նյութերի աղբյուրների նկարագրությունը.

դ) կառուցվածքի գտնվելու վայրի պայմանների նկարագրությունը.

ե) ձեռնարկություններից շրջակա միջավայր կանխատեսելի արտանետումների բնույթի և քանակի, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա արտանետումների էական ազդեցությունների բնույթի նկարագրությունը.

զ) կառուցվածքներից աղտոտող նյութերի արտանետումների կանխման, իսկ այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, նվազեցման համար առաջարկվող տեխնոլոգիաների և այլ տեխնիկայի նկարագրությունը.

է) անհրաժեշտության դեպքում, կառուցվածքի շահագործումից առաջացած թափոնների կանխման և վերականգնման միջոցների նկարագրությունը.

ը) հետագա այն միջոցների նկարագրությունը, որոնք նախատեսված են օպերատորի՝ 3-րդ հոդվածով սահմանված հիմնական պարտավորությունների ընդհանուր սկզբունքներին համապատասխանությունն ապահովելու համար.

թ) շրջակա միջավայր արտանետումների վերահսկման համար նախատեսված միջոցառումների նկարագրությունը.

ժ) առկայության դեպքում, հիմնական այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, որոնք ընդհանուր առմամբ ուսումնասիրվել են դիմում ներկայացնողի կողմից:

Թույլտվություն ստանալու մասին դիմումը պետք է ներառի նաև (ա) և (ժ) կետերում նշված մանրամասների ոչ տեխնիկական ամփոփ նկարագիրը:

2. Եթե 85/337/ԵՏՀ հրահանգի պահանջների համաձայն ներկայացված տեղեկատվությունը կամ Խորհրդի 1996 թվականի դեկտեմբերի 9-ի «Վտանգավոր նյութերի հետ կապված խոշոր վթարների ռիսկերի վերահսկման մասին» 96/82/ԵՀ հրահանգի(14)

համաձայն պատրաստված անվտանգության մասին զեկույցը կամ, օրենսդրության համաձայն տրամադրված այլ տեղեկատվություն համապատասխանում է սույն հոդվածի պահանջներին, այդ տեղեկատվությունը կարող է ներառվել դիմումի մեջ կամ կցվել դրան:

Հոդված 7

Թույլտվություններ տրամադրելու միասնական կարգը

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ թույլտվության տրամադրման պայմանները և ընթացակարգը ամբողջովին համաձայնեցվում են մեկ կամ ավելի իրավասու մարմնի ընդգրկված լինելու դեպքում՝ սույն ընթացակարգի նկատմամբ բոլոր իրավասու մարմինների կողմից արդյունավետ միասնական մոտեցում երաշխավորելու համար:

Հոդված 8

Որոշումները

Չհակասելով ազգային կամ Համայնքի օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ իրավասու մարմինը թույլտվություն է տրամադրում, որի մեջ նշվում են այն պայմանները, որոնք երաշխավորում են կառուցվածքի համապատասխանությունը սույն հրահանգի պահանջներին, իսկ եթե կառուցվածքը այդ պայմաններին չի համապատասխանում, մերժում է տրամադրել թույլտվությունը:

Բոլոր տրամադրվող և փոփոխվող թույլտվությունները պետք է ընդգրկեն մթնոլորտի, ջրային և հողային ռեսուրսների պահպանման համար ձեռնարկված միջոցների մանրամասները:

Հոդված 9

Թույլտվության տրամադրման պայմանները

1. Անդամ պետություններն ապահովում են, որ թույլտվության մեջ նշվեն բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են 3-րդ և 10-րդ հոդվածներում նշված պայմաններին համապատասխանությունն ապահովելու համար՝ մթնոլորտի, ջրային ռեսուրսների և հողի պահպանման միջոցով շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության բարձր մակարդակ հաստատելու նպատակով:

2. Նոր կառուցվածքի շահագործման կամ էական փոփոխման ժամանակ, որի դեպքում կիրառվում է 85/337/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածը, ցանկացած համապատասխան տեղեկատվություն, որը ձեռք է բերվել կամ եզրակացություն, որին հանգել են, այդ հրահանգի 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածների համաձայն, հաշվի է առնվում թույլտվության տրամադրման նպատակներով:

3. Թույլտվության մեջ նշվում են այն սահմանաքանակները, որոնք նախատեսված են աղտոտող նյութերի,մասնավորապես 3-րդ հավելվածում նշված նյութերի համար, որոնք տվյալ կառուցվածքից կարող են արտանետվել մեծ քանակներով՝ հաշվի առնելով դրանց բնույթը և շրջակա միջավայրի մի ավազանից մյուսն անցնելու հավանականությունը (ջրային ավազան, օդային ավազան, հողային ռեսուրսներ). Անհրաժեշտության դեպքում, թույլտվությունը ներառում է համապատասխան պահանջներ, որոնք ապահովում են ստորերկրյա և ստորգետնյա ջրերի պահպանումն ու այնպիսի միջոցներ, որոնք վերաբերում են կառուցվածքի շահագործման արդյունքում առաջացած թափոնների կառավարմանը: Անհրաժեշտության դեպքում, սահմանաքանակները կարող են լրացվել կամ փոխարինվել համարժեք պարամետրերով կամ տեխնիկական միջոցներով:

1-ին հավելվածի 6.6 կետում նշված կառուցվածքների համար սույն պարբերության համաձայն սահմանված արտանետումների սահմանաքանակների դեպքում հաշվի են առնվում կառուցվածքի այդ տեսակներին համապատասխան գործնական կիրառելիության պահանջները:

Եթե որևէ կառուցվածքից ջերմոցային գազերի արտանետումները նշված են Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումների արտոնագրերի վաճառքի համակարգ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 13-ի 2003/87/ԵՀ հրահանգի 1-ին հավելվածում՝ կապված այդ կառուցվածքում իրականացվող գործունեության հետ, թույլտվությունը չպետք է ներառի այդ գազի անմիջական արտանետումների համար նախատեսված արտանետումների սահմանաքանակ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է ապահովել, որ տեղի շրջակա միջավայրը զգալիորեն չի աղտոտվում:

2003/87/ԵՀ հրահանգի 1-ին հավելվածում նշված գործունեության համար անդամ պետությունները կարող են որոշել պահանջներ չսահմանել՝ աղբի այրման կայանների կամ այդ տարածքում ածխաթթու գազ արտանետող այլ կայանների էներգետիկ արդյունավետության վերաբերյալ:

Իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում համապատասխանաբար փոփոխում են թույլտվությունը՝ :

Երրորդ, չորրորդ և հինգերորդ ենթապարբերությունները չեն կիրառվում այն կառուցվածքների նկատմամբ, որոնք ժամանակավորապես չեն ներառվում Համայնքի տարածքում ջերմոցային գազերի արտանետումների արտոնագրերի վաճառքի համակարգի մեջ՝ համաձայն 2003/87/ԵՀ հրահանգի 27-րդ հոդվածի:

4. Չհակասելով 10-րդ հոդվածին՝ 3-րդ պարբերության մեջ նշված արտանետումների սահմանաքանակները և համարժեք պարամետրերն ու տեխնիկական միջոցները հիմնվում են լավագույն հասանելի տեխնոլոգիաների վրա՝ առանց նախատեսելու որևէ տեխնիկայի կամ տեխնոլոգիայի կիրառումը, բայց հաշվի առնելով տվյալ կառուցվածքի տեխնիկական առանձնահատկությունները, դրա աշխարհագրական դիրքը և տեղի բնապահպանական պայմանները: Բոլոր դեպքերում թույլտվության տրամադրման պայմաններով պետք է դրույթներ սահմանվեն աղտոտող նյութերի՝ հեռու տարածությունների և անդրսահմանային տեղափոխման նվազեցման մասին ու ապահովվի շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության բարձր մակարդակը,

5. Թույլտվությունը պետք է ներառի արտանետումների դիտանցման համապատասխան պահանջներ՝ նշելով չափման մեթոդաբանությունն ու պարբերականությունը, գնահատման ընթացակարգը և իրավասու մարմիններին թույլտվության պայմանների պահպանումը ստուգելու համար անհրաժեշտ տվյալների տրամադրման պարտավորությունը:

1-ին հավելվածի 6.6 կետում նշված կառուցվածքների դեպքում սույն պարբերության մեջ նշված միջոցների համար կարող են հաշվի առնվել ծախսերն ու եկամուտները:

6. Թույլտվության մեջ նշվում են այն միջոցները, որոնք վերաբերում են շահագործման բնականոն պայմաններից բացի այլ պայմանների: Հետևաբար եթե վտանգ կա, որ շրջակա միջավայրը կարող է ազդեցություն կրել, համապատասխան դրույթներ պետք է սահմանվեն շահագործման մեկնարկի, անսարքության, ժամանակավոր դադարների կամ գործունեության դադարեցման մասին:

Թույլտվության մեջ նաև նշվում են ժամանակավոր շեղումները 4-րդ պարբերության դրույթներից, եթե իրավասու մարմնի կողմից հաստատված վերականգնման ծրագիրն ապահովում է, որ այս պահանջները կբավարարվեն վեց ամսվա ընթացքում, և եթե ծրագիրը նպաստում է աղտոտման նվազեցմանը:

7. Սույն Հրահանգի նպատակներով՝ թույլտվության մեջ կարող են նշվել նման այլ որոշակի պայմաններ, որոնք նպատակահարմար կգտնեն անդամ պետությունները կամ իրավասու մարմինը:

8. Չհակասելով սույն Հրահանգի համաձայն թույլտվության տրամադրման ընթացակարգն իրականացնելու պարտավորությանը՝ անդամ պետությունները կարող են սահմանել որոշակի պահանջներ կառուցվածքների որոշ տեսակների համար, որոնք պարտադիր կլինեն բոլոր թույլտվությունների դեպքերում, դրանք առանձին թույլտվությունների պայմաններում ներառելու փոխարեն, պայմանով, եթե ապահովվում է միասնական մոտեցում և շրջակա միջավայրի ամբողջական պաշտպանության համարժեք մակարդակ:

Հոդված 10

Լավագույն հասանելի տեխնոլոգիաները և շրջակա միջավայրի որակի ստանդարտները

Եթե շրջակա միջավայրի որակի ստանդարտի համաձայն պահանջվում են ավելի խիստ պայմաններ, քան այն պայմանները, որոնք հնարավոր է ապահովել հասանելի լավագույն տեխնոլոգիաների ներդրման միջոցով, թույլտվության մեջ պետք է ներառվեն այլ միջոցներ, որոնք կարող են ձեռնարկվել՝ շրջակա միջավայրի որակի ստանդարտներին համապատասխանությունն ապահովելու համար:

Հոդված 11

Հասանելի լավագույն տեխնոլոգիաների կատարելագործումը

Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինը հետևի հասանելի լավագույն տեխնոլոգիաների կատարելագործմանը կամ իրազեկվի դրա մասին:

Հոդված 12

Կառուցվածքների փոփոխություններ օպերատորների կողմից

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ օպերատորը շահագործման ցանկացած նախատեսված փոփոխման մասին տեղեկացնում է իրավասու մարմնին: Անհրաժեշտության դեպքում, իրավասու մարմինը թարմացնում է թույլտվությունը կամ դրա պայմանները:

2. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ օպերատորի կողմից նախատեսված ոչ մի էական փոփոխություն չի իրականացվում առանց սույն Հրահանգի համաձայն տրամադրված թույլտվության: Թույլտվություն ստանալու մասին դիմումի և իրավասու մարմնի որոշման մեջ պետք է նշվեն կառուցվածքի այն մասերը և 6-րդ հոդվածում նշված այն հայեցակետերը, որոնց վրա փոփոխությունը կարող է ազդեցություն ունենալ: 3-րդ հոդվածի, 6-10-րդ հոդվածների և 15(1), (2) ու (3)

հոդվածների համապատասխան դրույթները կիրառվում են համապատասխան փոփոխություններով:

Հոդված 13

Իրավասու մարմնի կողմից թույլտվության տրամադրման պայմանների վերանայում և թարմացում

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ իրավասու մարմինները պարբերաբար վերանայեն և, անհրաժեշտության դեպքում, թարմացնեն թույլտվության տրամադրման պայմանները:

2. Վերանայումն իրականացվում է ցանկացած այն դեպքում, երբ՝

ա) կառուցվածքից արտանետվող աղտոտող նյութերի քանակն այնքան մեծ է, որ արտանետումների գործող սահմանաքանակները պետք է վերանայվեն կամ թույլտվության մեջ պետք է ընդգրկվեն նման նոր սահմանաքանակներ.

բ) լավագույն հասանելի տեխնոլոգիաների փոփոխությունները հնարավոր են դարձնում արտանետումների զգալի նվազեցումը առանց չափազանց մեծ ծախսերի.

գ) գործընթացի կամ գործունեության իրականացման անվտանգության համար պահանջվում է կիրառել այլ տեխնոլոգիաներ.

դ) այդպես է պահանջվում է Համայնքի կամ ազգային օրենսդրության նոր դրույթների համաձայն:

Հոդված 14

Համապատասխանությունը թույլտվության տրամադրման պայմաններին

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ պայմաններ՝ ապահովելու համար, որ՝

ա) օպերատորը կառուցվածքը շահագործելիս պահպանում է թույլտվության տրամադրման պայմանները

բ) օպերատորը կանոնավորապես տեղեկացնում է իրավասու մարմնին արտանետումների դիտանցման արդյունքների մասին, ինչպես նաև անհապաղ տեղեկացնում է ցանկացած վթարի կամ պատահարի մասին, որը կարող է էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա.

գ) օպերատորները իրավասու մարմնի ներկայացուցիչներին օժանդակում են՝ օգնելով նրանց իրականացնելու կառուցվածքի ցանկացած տեսակի զննում, նմուշներ վերցնելու և ստանալու ցանկացած տեղեկություն, որն անհրաժեշտ է՝ սույն Հրահանգի նպատակներով իրենց պարտականությունների կատարման համար:

Հոդված 15

Տեղեկատվության մատչելիությունը և հասարակության մասնակցությունը թույլտվությունների տրամադրման ընթացակարգին

1. Անդամ պետություններն ապահովում են, որ շահագրգիռ հասարակությանը տրվեն արդյունավետ հնարավորություններ՝ վաղ փուլում մասնակցելու հետևյալ ընթացակարգերին՝

ա) նոր կառուցվածքների շահագործման թույլտվության տրամադրում.

բ) ցանկացած էական փոփոխության համար թույլտվության տրամադրում.

գ) թույլտվության կամ թույլտվության տրամադրման պայմանների վերանայում՝ համաձայն 13(2)(ա) հոդվածի:

5-րդ հավելվածում նշված ընթացակարգը կիրառվում է նման մասնակցության նպատակներով:

2. Արտանետումների դիտանցման արդյունքները, որը պարտադիր է 9-րդ հոդվածում նշված թույլտվության տրամադրման պայմանների համաձայն և իրականացվում է իրավասու մարմինների կողմից, մատչելի են դարձվում հանրությանը:

3. 1-ին և 2-րդ պարբերությունները կիրառվում են՝համաձայն Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի «Բնապահպանական տեղեկությունների վերաբերյալ հասարակության տեղեկացվածության մասին» 2003/4/ԵՀ հրահանգի (16) 4(1), (2) և (4) հոդվածներին:

4. Որոշման ընդունումից հետո իրավասու մարմինը, համապատասխան ընթացակարգերի համաձայն, դրա մասին տեղեկացնում է հասարակությանը և տվյալ հասարակության համար մատչելի է դարձնում հետևյալ տեղեկությունները՝

ա) որոշման բովանդակությունը՝ ներառյալ թույլտվության և թույլտվության տրամադրման պայմանների պատճենն ու հետագա թարմացումները, և

բ) ուսումնասիրելով շահագրգիռ հասարակության դիտողություններն ու կարծիքները՝ որոշման ընդունման հիմքում ընկած հիմնական պատճառներն ու նկատառումները՝ ներառյալ տեղեկություններ՝ հասարակության մասնակցության գործընթացի վերաբերյալ:

Հոդված 16

Արդարադատության մատչելիությունը

1. Անդամ պետություններն ապահովում են, որ համապատասխան ազգային օրենսդրության համաձայն, շահագրգիռ հասարակության անդամներին հասանելի լինի դատարանում կամ մեկ այլ անկախ կամ անկողմնակալ մարմնում վերանայման ընթացակարգը՝ վիճարկելու համար սույն Հրահանգի՝ հասարակության մասնակցության դրույթների առարկա հանդիսացող որոշումների, գործողությունների կամ անգործության նյութական կամ ընթացակարգային օրինականությունը, եթե՝

ա) նրանք բավականաչափ շահագրգռված են.

բ) նրանք պահպանում են իրավունքի խախտման սահմանափակումը, եթե դա պահանջվում է անդամ պետության վարչական դատավարության իրավունքով՝ որպես նախապայման:

2. Անդամ պետությունները սահմանում են, թե որ փուլում կարող են վիճարկվել որոշումները, գործողությունները կամ անգործությունը:

3. Թե ինչ են իրենցից ներկայացնում բավարար շահագրգռվածությունը և իրավունքը չեղյալ հայտարարելը, սահմանվում է անդամ պետությունների կողմից՝ համաձայն հասարակության համար արդարադատության մատչելիությունն ապահովելու նպատակի: Այս նպատակով շրջակա միջավայրի պաշտպանությունը խթանող և ազգային օրենսդրության բոլոր պահանջները բավարարող կազմակերպությունների շահագրգռվածությունը համարվում է բավարար՝ 1(ա) պարբերության նպատակով:

Նման կազմակերպություններն ունեն նաև սահմանափակման ենթակա իրավունքներ՝ սույն հոդվածի 1(բ) պարբերության նպատակով:

4. Սույն հոդվածի դրույթները չեն բացառում նախնական վերանայման ընթացակարգի հնարավորությունը վարչական որևէ մարմնում և չեն ազդում դատական վերանայման ընթացակարգերից առաջ վարչական վերանայման ընթացակարգի դադարման պահանջի վրա, եթե նման պահանջ սահմանված է ազգային օրենսդրությամբ:

Ցանկացած նման ընթացակարգ պետք է լինի արդար, անաչառ, առանց ձգձգումների և չընդգրկի չափազանց մեծ ծախսեր:

5. Անդամ պետությունները սույն հոդվածի դրույթների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ապահովում են, որ հասարակությանը մատչելի լինեն վարչական և դատական վերանայման ընթացակարգերի մասին գործնական տեղեկությունները :

Հոդված 17

Տեղեկատվության փոխանակումը

1. Անդամ պետությունները տեղեկատվության փոխանակման նպատակով ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ երեք տարին մեկ, իսկ առաջին անգամ՝ մինչև 2001 թվականի ապրիլի 30-ը, Հանձնաժողով ուղարկելու նպատակով 1-ին հավելվածի համաձայն գործունեության տարբեր տեսակների համար սահմանված արտանետումների սահմանաքանակների մասին առկա տվյալները և,անհրաժեշտության դեպքում, այն հասանելի լավագույն տեխնոլոգիաների մասին տվյալները, որոնց համար, 9-րդ հոդվածի

համաձայն, սահմանվել են այդ սահմանաքանակները: Հետագայում տվյալները պետք է լրացվեն՝ համաձայն սույն հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգերի:

2. Հանձնաժողովը կազմակերպում է անդամ պետությունների և արդյունաբերության ճյուղերի միջև տեղեկատվության փոխանակում լավագույն հասանելի տեխնոլոգիաների, դրանց դիտանցման և կատարելագործման մասին:

Երեք տարին մեկ անգամ Հանձնաժողովը հրապարակում է տեղեկատվության փոխանակման արդյունքները:

3. Երեք տարին մեկ և առաջին անգամ՝ 1999 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև 2002 թվականի հոկտեմբերի 30-ը ներառյալ, անդամ պետությունները՝ որպես հաշվետվություն, սույն Հրահանգի իրականացման մասին տեղեկություններ են ուղարկում Հանձնաժողով: Հաշվետվությունը կազմվում է Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 23-ի «Շրջակա միջավայրին վերաբերող որոշ հրահանգների իրականացման մասին հաշվետվությունների ստանդարտացման և ռացիոնալիզացման մասին» 91/962/ԵՏՀ հրահանգում(_17_) նշված ընթացակարգի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից մշակված հարցաշարի կամ համառոտ նկարագրի հիման վրա: Այս հարցաշարը կամ համառոտ նկարագիրն ուղարկվում է անդամ պետություններին հաշվետվության մեջ նշված ժամկետի սկզբից վեց ամիս առաջ: Հաշվետվությունը ներկայացվում է Հանձնաժողով՝ հաշվետվության մեջ նշված եռամյա ժամկետի ավարտից հետո ինն ամսվա ընթացքում:

Հանձնաժողովը սույն Հրահանգի իրականացման մասին Համայնքի հաշվետվությունը հրապարակում է անդամ պետություններից հաշվետվություններն ստանալուց հետո ինն ամսվա ընթացքում:

Հանձնաժողովը Համայնքի հաշվետվությունը ներկայացնում է Եվրոպական պառլամենտ և Խորհուրդ:

4. Անդամ պետությունները ստեղծում կամ նշանակում են մարմին կամ մարմիններ, որոնք պատասխանատու են 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված տեղեկատվության փոխանակման համար, և համապատասխանաբար դրա մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

Հոդված 18

Անդրսահմանային ազդեցությունները

1. Եթե անդամ պետությանը հայտնի է, որ որևէ կառուցվածքի շահագործումը կարող է բացասաբար ազդել մեկ այլ անդամ պետության շրջակա միջավայրի վրա, կամ եթե որևէ անդամ պետություն, որը կարող է էական ազդեցություններ կրել, նման պահանջ է ներկայացնում, այն անդամ պետությունը, որի տարածքում 4-րդ կամ 12(2) հոդվածի համաձայն թույլտվություն ստանալու մասին դիմում է ներկայացվել, մյուս անդամ պետություն է ուղարկում ցանկացած տեղեկություն, որը պահանջվում է տրամադրել կամ մատչելի դարձնել 5-րդ հավելվածի համաձայն, այն նույն ժամանակահատվածում, երբ այդ տեղեկությունը տրամադրվում է տվյալ անդամ պետության քաղաքացիներին: Նման տեղեկությունները հիմք են ծառայում երկու երկրների միջև երկկողմ հարաբերությունների շրջանակում փոխադարձության և համարժեքության հիման վրա անհրաժեշտ ցանկացած խորհրդակցության համար:

2. Երկկողմ հարաբերությունների շրջանակում անդամ պետություններն ապահովում են, որ 1-ին պարբերության մեջ նշված դեպքերում դիմումները համապատասխան ժամկետներով մատչելի լինեն այն անդամ պետության հասարակության համար, որը կարող է ազդեցություն կրել, որպեսզի այդ հասարակությունը կարողանա հայտնել իր դիտողությունները՝ իրավասու մարմնի կողմից որոշման ընդունումից առաջ:

3. 1-ին և 2-րդ պարբերություններում նշված խորհրդակցությունների արդյունքները հաշվի են առնվում այն ժամանակ, երբ իրավասու մարմինը որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ:

4. Իրավասու մարմինը տեղեկացնում է ցանկացած անդամ պետության, որի հետ խորհրդակցել են 1-ին պարբերության համաձայն, դիմումի վերաբերյալ ընդունած որոշման մասին և այդ անդամ պետություն է ուղարկում 15(4) հոդվածում նշված տեղեկությունները: Այդ անդամ պետությունն ապահովում է, որ տեղեկությունները պատշաճ կերպով հասանելի լինեն այդ պետության տարածքում գտնվող շահագրգիռ հասարակությանը.

Հոդված 19

Արտանետումների սահմանաքանակները Համայնքում

1. Եթե հաստատվել է Համայնքի մակարդակով գործողությունների անհրաժեշտությունը՝ հիմնվելով, մասնավորապես, 17-րդ հոդվածում նշված տեղեկատվության փոխանակման վրա, ապա Եվրոպական պառլամենտը և Խորհուրդը, գործելով Հանձնաժողովի կողմից ստացված առաջարկի հիման վրա, համաձայն Պայմանագրում նշված ընթացակարգերի, սահմանում են արտանետումների սահմանաքանակներ՝

ա) 1-ին հավելվածում նշված կառուցվածքների համար՝ բացառությամբ այդ հավելվածի 5,1 և 5,4 կետերով կարգավորվող աղբահորերի.

և

բ) 3-րդ հավելվածում նշված աղտոտող նյութերի համար:

2. Եթե Համայնքի կողմից սույն Հրահանգի համաձայն սահմանաքանակներ չեն սահմանվել, 2-րդ հավելվածում և Համայնքի այլ օրենսդրությունում նշված արտանետումների համապատասխան սահմանաքանակները կիրառվում են որպես նվազագույն սահմանաքանակներ՝ 1-ին հավելվածում նշված կառուցվածքների համար:

3. Չհակասելով սույն Հրահանգի պահանջներին՝ տեխնիկական այն պահանջները, որոնք կիրառվում են 1-ին հավելվածի 5,1 և 5,4 կետերով կարգավորվող աղբահորերի նկատմամբ, սահմանվել են «Թափոնների թաղման մասին» Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/31/ԵՀ հրահանգում (18):

Հոդված 20

Անցումային դրույթները

1. 84/360/ԵՏՀ հրահանգի դրույթները, 2006/11/ԵՀ հրահանգի 4-րդ, 5-րդ և 6(2) հոդվածների դրույթներն ու 2-րդ հավելվածի հրահանգներում նշված հավատարմագրման

համակարգերի մասին համապատասխան դրույթները, չհակասելով 2001/80/ԵՀ հրահանգով նախատեսված բացառություններին, կիրառվում են գործող կառուցվածքների համար՝ կապված 1-ին հավելվածում նշված գործունեության հետ, մինչև իրավասու մարմինների կողմից սույն Հրահանգի 5-րդ հոդվածի համաձայն անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը:

2. 2-րդ հավելվածի հրահանգներում նշված հավատարմագրման համակարգերի մասին համապատասխան դրույթները 1-ին հավելվածում նշված գործունեության դեպքում չեն կիրառվում այն կառուցվածքների նկատմամբ, որոնք 2-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով գործող չեն:

3. 84/360/ԵՏՀ հրահանգը ուժը կորցրած է ճանաչվում 2007թվականի հոկտեմբերի 30–ից:

Գործելով Հանձնաժողովից ստացված առաջարկի համաձայն՝ Խորհուրդը կամ Եվրոպական պառլամենտն ու Խորհուրդը, անհրաժեշտության դեպքում, փոփոխում են 2-րդ հավելվածում նշված հրահանգների համապատասխան դրույթները՝ դրանք մինչև 2007 թվականի հոկտեմբերի 30-ը սույն Հրահանգի պահանջներին հարմարեցնելու համար:

Հոդված 21

Տեղեկությունների փոխանցումը

Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստերը, որոնք ընդունվում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 22

Ուժը կորցրած ճանաչելը

69/61/ԵՀ հրահանգը, փոփոխված 6-րդ հավելվածի Ա մասում նշված ակտերով, ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով 6-րդ հոդվածի Ա մասով սահմանված՝ հրահանգներն

ազգային օրենսդրություն փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած հրահանգներին կատարվող հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին կատարվող հղումներ և մեկնաբանվեն՝ 3-րդ հավելվածով սահմանված համեմատական աղյուսակին համապատասխան:

Հոդված 23

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակմանը հաջորդող 20-րդ օրը:

Հոդված 24

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ I

1-ԻՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Այն կառուցվածքները կամ կառուցվածքների որոշ մասերը, որոնք օգտագործվում են նոր արտադրանքների կամ գործընթացների հետազոտման, կատարելագործման և թեստավորման նպատակներով, չեն կարգավորվում սույն Հրահանգով:

2. Ստորև ներկայացված սահմանաքանակները հիմնականում վերաբերում են արտադրողականությանը կամ արտադրության ծավալներին: Եթե որևէ օպերատոր միևնույն կառուցվածքում կամ միևնույն տարածքում իրականացնում է նույն ենթագլխի մեջ մտնող մի քանի գործունեություններ, նման գործունեությունների արտադրողական կարողությունները գումարվում են:

1. **Էներգետիկա**

   1.1. Այրման կայաններ, որոնց նոմինալ ջերմային հզորությունը գերազանցում է 50 ՄՎ–ն:

   1.2. Նավթի և գազի մշակման գործարաններ

   1.3. Կոքսի վառարաններ:

   1.4. Քարածխի գազացման և հեղուկացման գործարաններ:

2. **Մետաղների արտադրությունն ու վերամշակումը**

   2.1. Մետաղների հանքաքարերի (ներառյալ ծծմբային հանքաքարի) թրծման կամ այրման կառուցվածքներ:

   2.2. Չուգունի կամ պողպատի արտադրման (առաջնային կամ երկրորդային հալում), ինչպես նաև շարունակական ձուլման կառուցվածքներ, որոնց արտադրողականությունը գերազանցում է ժամում 2,5 տոննան:

   2.3. Սև մետաղների վերամշակման կառուցվածքներ.

ա) գլանման հաստոցներ, որոնք արտադրում են ժամում 20 տոննայից ավելի չմշակված պողպատ,

բ) դարբնոցներ, որոնք ապահովված են մուրճերով, որոնցից յուրաքանչյուրի էներգիան գերազանցում է 50 կիլոջոուլը, երբ օգտագործվող ջերմատվությունը գերազանցում է 20 ՄՎ–ը.

գ) ձուլված մետաղական պաշտպանիչ ծածկերի օգտագործում, որոնց օգնությամբ ժամում արտադրվում է ավելի քան 2 տոննա պողպատ:

2.4. Սև մետաղների ձուլման ցեխեր, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 20 տոննան

2.5. Կառուցվածքներ

ա) հանքաքարերից, կոնցենտրատներից կամ երկրորդական հումքից մետաղագործական, քիմիական կամ էլեկտրոլիտիկ գործընթացների միջոցով գունավոր չմշակված մետաղների արտադրության համար.

բ) գունավոր մետաղների, այդ թվում՝ վերականգնված արտադրանքի (վերամշակում, երկաթապատում) հալման, ինչպես նաև ձուլման համար, որոնց հալման հզորությունը գերազանցում է օրական 4 տոննան՝ կապարի և կադմիումի համար, և 20 տոննան՝ մյուս բոլոր մետաղների համար:

2.6. Էլեկտրոլիտիկ կամ քիմիական գործընթացների միջոցով մետաղների և պլաստմասսայի նախնական վերամշակման կառուցվածքներ, երբ վերամշակման ցիստեռների ծավալը գերազանցում է 30 մ3-ը:

3. **Հանքարդյունաբերություն**

3.1. Կառուցվածքներ՝ պտտվող վառարաններում ցեմենտի կլինկերի թրծման համար, որոնց արտադրողականությունը գերազանցում է 500 տոննան, կամ պտտվող վառարաններում կրի արտադրության համար, որոնց արտադրողականությունը գերազանցում է 50 տոննան, կամ այլ վառարանների օգտագործմամբ, որոնց

արտադրողականությունը գերազանցում է 50 տոննան:

3.2. Կառուցվածքներ՝ ասբեստի կամ ասբեստ պարունակող արտադրանքի արտադրության համար:

3.3. Ապակու, ինչպես նաև ապակե մանրաթելի արտադրության կառուցվածքներ, որոնց հալման հզորությունը գերազանցում է օրական 20 տոննան:

3.4. Հանքային նյութերի հալման՝ ներառյալ հանքային մանրաթելի արտադրության կառուցվածքներ, որոնց հալման հզորությունը գերազանցում է օրական 20 տոննան:

3.5. Կերամիկական ապրանքների, մասնավորապես՝ ծածկի կղմինդրի, աղյուսի, հրակայուն աղյուսի, կղմինդրի, կավե ամանեղենի կամ ճենապակու արտադրման կառուցվածքներ, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 75 տոննան, և (կամ) որոնց վառարանների ծավալը գերազանցում է 4 մ3-ը, իսկ ցանկացած վառարանի խտությունը գերազանցում է 300 կգ/մ3-ը:

4. **Քիմիական արտադրություն**

Սույն մասում նշված գործունեության տեսակների իմաստով արտադրությունը նշանակում է արդյունաբերական ծավալներով արտադրություն՝ 4.1-4.6 կետերում թվարկված նյութերի կամ նյութերի խմբերի քիմիական վերամշակման միջոցով:

4.1. Քիմիական կոմբինատներ՝ հիմնական օրգանական քիմիական նյութերի արտադրության համար, ինչպիսիք են՝

ա) պարզ ածխաջրածինները (կանոնավոր կամ ցիկլային, հագեցած կամ չհագեցած, ալիֆատիկ կամ արոմատիկ).

բ) թթվածին պարունակող ածխաջրածինները, ինչպիսիք են սպիրտը, կետոնները, կարբոնաթթուները, եթերները, ացետատները, պերօքսիդները, էպօքսիդային խեժը.

գ) ծծմբային ածխաջրածինները.

դ) ազոտական ածխաջրածինները, ինչպիսիք են ամինները, ամիդները, ազոտային

միացությունները կամ նիտրոմիացությունները, նիտրիլները, ցիանատները, իզոցիանատները.

ե) ֆոսֆոր պարունակող ածխաջրածինները.

զ) հալոգեն ածխաջրածինները.

է) մետաղաօրգանական միացությունները.

ը) պլաստմասսա (պոլիմերներ, սինթետիկ մանրաթել և թաղանթանյութ).

թ) սինթետիկ կաուչուկը.

ժ) ներկանյութերը և պիգմենտները.

ժա) մակերևութաակտիվ նյութերը:

4.2. Քիմիական կոմբինատներ հիմնական անօրգանական քիմիական նյութերի արտադրության համար, ինչպիսիք են՝

ա) գազերը, ինչպիսիք են ամոնիակը, քլորը կամ քլորաջրածինը, ֆտորը կամ ֆտորաջրածինը, ածխածնի օքսիդը, ծծմբային միացությունները, ազոտի օքսիդները, ջրածինը, ծծմբային անհիդրիդը, կարբոնիլ քլորիդը.

բ) թթուները, ինչպիսիք են քրոմաթթուն, ֆտորաջրածնաթթուն, ֆոսֆորային թթուն, ազոտական թթուն, քլորաջրածնային թթուն, ծծմբաթթուն, օլեումը/ (ծխացող ծծմբաթթուն), ծծմբավոր թթուները.

գ) հիմքերը, ինչպիսիք են ամոնիումի հիդրօքսիդը, կալիումի հիդրօքսիդը, նատրիումի հիդրօքսիդը.

դ) աղերը, ինչպիսիք են ամոնիումի քլորիդը, կալիումի քլորատը, կալիումի կարբոնատը, նատրիումի կարբոնատը, պերբորատը, արծաթի նիտրատը.

ե) ոչ մետաղները, ինչպիսիք են մետաղի օքսիդները կամ այլ անօրգանական միացություններ, ինչպիսիք են կալցիումի կարբիդը, սիլիցիումը, սիլիցիումի կարբիդը:.

4.3. Քիմիական կոմբինատներ՝ ֆոսֆորի, ազոտի կամ կալիումի վրա հիմնված պարարտանյութերի արտադրության համար (պարզ կամ բարդ պարարտանյութեր):

4.4. Քիմիական կոմբինատներ՝ բույսերի առողջության պահպանման հիմնական արտադրանքի և բիոցիդների արտադրության համար:

4.5. Քիմիական կամ կենսաբանական գործընթացների կիրառմամբ հիմնական դեղագործական արտադրանքի արտադրության կոմբինատներ:

4.6. Քիմիական կոմբինատներ՝ պայթուցիկ նյութերի արտադրության համար:

5. **Թափոնների կառավարում**

Չհակասելով 2006/12/ԵՀ հրահանգի 11-րդ հոդվածին կամ Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի «Վտանգավոր թափոնների մասին» 91/689/ԵՏՀ հրահանգին՝

5.1. 91/689/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածով սահմանված ցանկում և 2006/12/ԵՀ հրահանգի 2 (Ա) ու 2(Բ) հավելվածներում (գործողություններ՝ R1, E5, R8 և R9) ու Խորհրդի 1975 թվականի հունիսի 16-ի «Նավթի թափոնների հեռացման մասին» 75/439/ԵՏՀ հրահանգում նշված՝ վտանգավոր թափոնների հեռացման կամ վերականգնման կառուցվածքներ, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 10 տոննան:(

5.2. Քաղաքային թափոնների (կենցաղային թափոններ և արդյունագործական, արդյունաբերական ու հասարակական կառույցների նմանատիպ թափոններ) այրման գործարաններ, որոնց արտադրողականությունը գերազանցում է ժամում 3 տոննան:

5.3. D8 և D9 գլուխներում նշված 2006/12/ԵՀ հրահանգի 2-րդ հավելվածի Ա մասով սահմանված կառուցվածքներ՝ ոչ վտանգավոր թափոնների հեռացման համար, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 50 տոննան:

5.4. Աղբահորեր, որտեղ կուտակվում է օրական 10 տոննա թափոն, կամ որի ընդհանուր տարողունակությունը գերազանցում է 25000 տոննան՝ բացառությամբ իներտ

թափոնների համար նախատեսված աղբահորերի:

6. **Այլ գործունեություն**

6.1. Արդյունաբերական կառուցվածքներ, որոնք նախատեսված են՝

ա) փայտանյութից կամ այլ թելավոր նյութերից ցելյուլոզայի արտադրության համար.

բ) օրական 20 տոննան գերազանցող արտադրողականությամբ՝ թղթի և ստվարաթղթի արտադրության համար:

6.2. Գործարաններ՝ թելերի և տեքստիլի նախնական մշակման (լվացում, գունաթափում, մերսերացում) կամ ներկման համար, որոնց վերամշակման ծավալը գերազանցում է օրական 10 տոննան:

6.3. Գործարաններ՝ մորթիների և կաշիների ներկման համար, որտեղ օրական մշակվում է ավելի քան 12 տոննա պատրաստի արտադրանք:

6.4. ա) մսեղիքի արտադրման սպանդանոցներ, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 50 տոննան

բ) մշակում և վերամշակում, որը նախատեսված է սննդամթերքի արտադրության համար՝

– կենդանական ծագման հումքից (բացառությամբ կաթի)՝ օրական ավելի քան 75 տոննա արտադրողականությամբ.

– բուսական ծագման հումքից՝ օրական ավելի քան 300 տոննա արտադրողականությամբ: (միջին ցուցանիշ՝ եռամսյա կտրվածքով).

գ) Կաթի մշակում և վերամշակում, եթե մեկ օրվա ընթացքում ստացված կաթի քանակը գերազանցում է 200 տոննան (միջին ցուցանիշ՝ տարեկան կտրվածքով):

6.5. Կենդանիների մսեղիքի և կենդանական թափոնների հեռացման ու վերամշակման համար կառուցվածքներ, որոնց վերամշակման ծավալը գերազանցում է օրական10

տոննան:

6.6. Կառուցվածքներ՝ ընտանի թռչունների կամ խոզերի ինտենսիվ բուծման համար, որն ունի՝

ա) ավելի քան 40000 տեղ՝ ընտանի թռչունների համար.

բ) ավելի քան 2.000 տեղ՝ արտադրության համար նախատեսվող խոզերի (30 կգ-ից ավելի) համար կամ

գ) ավելի քան 750 տեղ՝ խոզերի համար:

6.7. Նյութերի, առարկաների կամ օրգանական լուծիչներ պարունակող արտադրանքների նախնական մշակման, մասնավորապես՝ հղկման, տպագրման, երեսպատման, ճարպահեռացման, անջրանցիկության ապահովման, չափսերի որոշման, ներկման, մաքրման կամ բեղմնավորման համար նախատեսված կառուցվածքներ, որոնց սպառման ծավալը գերազանցում է ժամում 150 կգ–ը կամ տարեկան 200 տոննան :

6.8. Մոխրացման և գրաֆիտացման միջոցով ածխի կամ էլեկտրոգրաֆիտի արտադրության կառուցվածքներ:

▼M1

6.9.

Սույն Հրահանգով կարգավորվող կառուցվածքներից արտանետվող ածխաթթու գազի ստորգետնյա պահեստավորման նպատակներով՝Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի ապրիլի 23-ի «Ածխաթթու գազի ստորգետնյա պահեստավորման մասին» 2009/31/ԵՀ հրահանգի համաձայն:

▼B

ՀԱՎԵԼՎԱԾ II

19(2), (3) և 20-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ՑԱՆԿԸ

1. «Ասբեստով շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու և նվազեցնելու մասին» Խորհրդի 1987 թվականի մարտի 19-ի 87/217/ԵՏՀ հրահանգ

2. «Ալկալիական էլեկտրոլիզի արդյունաբերության սեկտորում սնդիկի արտանետումների սահմանաքանակների և որակի պահանջների մասին» Խորհրդի 1982 թվականի մարտի 22-ի 82/176/ԵՏՀ հրահանգ

3. «Կադմիումի արտանետումների սահմանաքանակների և որակի պահանջների մասին» Խորհրդի 1983 թվականի սեպտեմբերի 26-ի 83/513/ԵՏՀ հրահանգ

4. «Ալկալիական էլեկտրոլիզի արդյունաբերության սեկտորից բացի այլ սեկտորներում սնդիկի արտանետումների սահմանաքանակների և որակի պահանջների մասին» Խորհրդի 1984 թվականի մարտի 8-ի 84/156/ԵՏՀ հրահանգ

5. «Հեքսաքլորոցիկլոհեքսանի արտանետումների սահմանաքանակների և որակի պահանջների մասին» Խորհրդի 1984 թվականի հոկտեմբերի 9-ի 84/491/ԵՏՀ հրահանգ

6. «76/464/ԵՏՀ հրահանգի հավելվածի 1-ին ցանկում ներառված որոշ վտանգավոր նյութերի արտանետումների սահմանաքանակների որակի պահանջների մասին» Խորհրդի 1986 թվականի հունիսի 12-ի 86/280/ԵՏՀ հրահանգ:

7. «Թափոնների այրման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 4-ի 2000/76/ԵՀ հրահանգ:

8. «Տիտանի օքսիդի արդյունաբերության թափոններից գոյացող աղտոտման նվազեցման և վերջնական վերացման ծրագրերի ներդաշնակեցման ընթացակարգերի մասին» Խորհրդի 1992 թվականի դեկտեմբերի 15-ի 92/112/ԵՏՀ հրահանգ:

9. «Աղբի այրման խոշոր գործարաններից որոշ աղտոտող նյութերի մթնոլորտ արտանետումների նվազեցման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի հոկտեմբերի 23-ի 2001/80/ԵՀ հրահանգ

10. «Համայնքի ջրային ավազան արտանետվող՝ որոշ վտանգավոր նյութերից գոյացած աղտոտման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի փետրվարի 15-ի 2006/11/ԵՀ հրահանգ

11. «Թափոնների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի ապրիլի 5-ի 2006/12/ԵՀ հրահանգ

12. 16-ի «Նավթի թափոնների հեռացման մասին» Խորհրդի 1975 թվականի հունիսի 75/439/ԵՏՀ հրահանգ

13. «Վտանգավոր թափոնների մասին» Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/689/ԵՏՀ հրահանգ

14. «Թափոնների թաղման մասին» Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի 1999/31/ԵՀ հրահանգ:

ՀԱՎԵԼՎԱԾ III

Հիմնական այն աղտոտող նյութերի ինդիկատիվ ցանկը, որոնք պետք է դիտարկվեն, եթե անհրաժեշտ են սահմանային թույլատրելի նորմաները սահմանելու համար

Օդ

1. Ծծմբի երկօքսիդ և այլ ծծմբային միացություններ
2. Ազոտի օքսիդներ և այլ ազոտային միացություններ
3. Ածխածնի երկօքսիդ
4. Ցնդող օրգանական միացություններ
5. Մետաղներ և դրանց միացությունները
6. Փոշի
7. Ասբեստ (օդ բարձրացած մասնիկներ, մանրաթելեր)
8. Քլոր և դրա միացությունները
9. Ֆտոր և դրա միացությունները
10. Արսենիում և դրա միացությունները
11. Ցիանիդներ
12. Նյութեր և պատրաստուկներ, որոնցում հաստատվել է քաղցկեղածին կամ մուտագեն հատկանիշների առկայությունը, կամ այնպիսի հատկանիշների առկայությունը, որոնք օդի միջոցով կարող են ազդել վերարտադրության վրա:
13. Պոլիքլորինացված դիբենզոդիօքսին և պոլիքլորինացված դիբենզոֆուրան

Ջուր

1. Օրգանահալոգեն միացություններ և նյութեր, որոնք ջրային ավազանում կարող են կազմել նման միացություններ
2. Օրգանաֆոսֆորային միացություններ

3. Organotin compounds.
4. Նյութեր և պատրաստուկներ, որոնցում հաստատվել է քաղցկեղածին կամ մուտագեն հատկանիշների առկայությունը, կամ այնպիսի հատկանիշների առկայությունը, որոնք ջրային ավազանում կամ դրա միջոցով կարող են ազդել վերարտադրության վրա:
5. Կայուն ածխաջրածիններ և կայուն ու կենսակուտակման հատկանիշով օժտված օրգանական թունավոր նյութեր
6. Ցիանիդներ
7. Մետաղներ և դրանց միացությունները
8. Արսենիում և դրա միացությունները
9. Բիոցիդներ և բույսերի առողջության պահպանման արտադրանքներ
10. Օդ բարձրացած նյութեր
11. Նյութեր, որոնք առաջ են բերում ճահճացում (մասնավորապես նիտրատներ և ֆոսֆատներ)
12. Նյութեր, որոնք բացասաբար են ազդում թթվածնային հավասարակշռության վրա (և կարող են չափվել՝ կիրառելով այնպիսի պարամետրեր, ինչպիսիք են թթվածնի կենսաբանական պահանջը, թթվածնի քիմիական պահանջը և այլն)

ՀԱՎԵԼՎԱԾ IV

Կետեր, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ընդհանրապես կամ 2(12) հոդվածում նշված լավագույն հասանելի տեխնոլոգիաները սահմանելիս՝հաշվի առնելով որևէ միջոցառման հնարավոր ծախսերը և եկամուտներն ու նախազգուշացման և կանխման սկզբունքները՝

1. քիչ թափոններով տեխնոլոգիաների օգտագործումը.
2. նվազ վտանգավոր նյութերի օգտագործումը.
3. անհրաժեշտության դեպքում, այդ պրոցեսի արդյունքում առաջացած կամ օգտագործված նյութերի և թափոնների վերականգնման կամ վերամշակման խթանումը.
4. համեմատական պրոցեսները, սարքավորումները կամ շահագործման մեթոդները, որոնք արդյունաբերության մեջ հաջողությամբ կիրառվել են.
5. տեխնոլոգիական առաջընթացները և գիտական մտքի ու գիտելիքների փոփոխությունները
6. համապատասխան արտանետումների բնույթը, ազդեցությունները և ծավալը.
7. նոր և օգտագործվող կառուցվածքների շահագործման մեկնարկի օրերը.
8. հասանելի լավագույն տեխնոլոգիաները ներդնելու համար անհրաժեշտ ժամանակի տևողությունը.
9. պրոցեսում օգտագործվող հումքի սպառումն ու բնույթը և էներգետիկ արդյունավետությունը.
10. շրջակա միջավայրի վրա արտանետումների ազդեցությունը և դրանց վտանգները կանխելու կամ նվազագույնին հասցնելու անհրաժեշտությունը.
11. վթարները կանխելու և շրջակա միջավայրի համար դրանց հետևանքները նվազեցնելու անհրաժեշտությունը.
12. Հանձնաժողովի կողմից 17(2) հոդվածի 2-րդ պարբերության համաձայն կամ միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված տեղեկությունները:

ՀԱՎԵԼՎԱԾ V

ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1. Հասարակությունը հրապարակային ծանուցումներով կամ համապատասխան այլ միջոցներով, ինչպիսիք են, առկայության դեպքում, էլեկտրոնային լրատվամիջոցները, հետևյալի մասին իրազեկվում է 2(2) հոդվածում նշված՝ շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման ընթացակարգի վաղ փուլում, իսկ ամենաուշը՝ տեղեկատվությունը համապատասխան կերպով տրամադրելու հնարավորության դեպքում՝

ա) թույլտվության դիմում կամ, անհրաժեշտության դեպքում, համաձայն 15(1) հոդվածի՝ թույլտվությունը կամ թույլտվության պայմանները վերանայելու առաջարկ՝ներառյալ 6(1) հոդվածում նշված տարրերի նկարագրությունը.

բ) անհրաժեշտության դեպքում, տեղեկություն այն մասին, որ որոշումը ենթակա է ազգային կամ անդրսահմանային ազդեցության գնահատման կամ անդամ պետությունների միջև խորհրդակցության՝ 18-րդ հոդվածի համաձայն.

գ) մանրամասներ որոշումն ընդունելու համար պատասխանատու իրավասու մարմինների մասին, ինչպես նաև այն մարմինների մասին, որոնցից կարելի է ձեռք բերել համապատասխան տեղեկատվությունը, այն մարմինների մասին, որոնց կարելի է ներկայացնել դիտողություններ կամ հարցեր, և դիտողություններն ու հարցերը փոխանցելու ժամկետների մասին.

դ) հնարավոր որոշումների բնույթի կամ, առկա որոշման դեպքում, որոշման նախագծի մասին.

ե) անհրաժեշտության դեպքում, մանրամասներ՝ թույլտվությունը կամ թույլտվության պայմանները վերանայելու առաջարկի վերաբերյալ.

զ) հիշատակում ժամկետների կամ այն վայրերի մասին, որտեղ և որոնց միջոցով համապատասխան տեղեկատվությունը մատչելի կլինի.

է) հասարակության մասնակցության կամ խորհրդակցության՝ 5-րդ կետի համաձայն արված կարգավորումների մանրամասներ:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ հետևյալը համապատասխան ժամկետներում մատչելի լինի հասարակությանը՝

ա) համաձայն ազգային օրենսդրության՝ հիմնական զեկույցները և խորհուրդները, որոնք ներկայացվել են իրավասու մարմին կամ մարմիններ այն ժամանակահատվածում, երբ շահագրգիռ հասարակությունը տեղեկացվել է՝ 1-ին կետի համաձայն.

բ) 2003/4/ԵՀ հրահանգի դրույթների համաձայն՝ 1-ին կետով նշված տեղեկություններից բացի այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են 8-րդ հոդվածով սահմանված որոշման համար, և որոնք մատչելի են դառնում միայն այն բանից հետո, երբ շահագրգիռ հասարակությունը տեղեկացվել է 1-ին կետի համաձայն.

3. Շահագրգիռ հասարակությունն իրավունք ունի որոշումն ընդունելուց առաջ իրավասու մարմին դիտողություններ և կարծիքներ ներկայացնելու:

4. Սույն հավելվածի համաձայն իրականացված խորհրդակցությունների արդյունքները պետք է համապատասխանաբար հաշվի առնվեն որոշման ընդունման ժամանակ:

5. Հասարակությանը տեղեկացնելու (օրինակ՝ որոշակի շառավղով պաստառներ փակցնելու կամ տեղական թերթերում հրապարակումների միջոցով) և հասարակության հետ խորհրդակցելու մանրամասն միջոցառումները (օրինակ՝ գրավոր դիմումների կամ հանրային հարցումների միջոցով) սահմանվում են անդամ պետությունների կողմից: Սահմանվում են ողջամիտ ժամկետներ՝ տրամադրելով բավարար ժամանակ հասարակության տեղեկացման և շահագրգիռ հասարակության կողմից սույն հոդվածի դրույթների համաձայն շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին նախապատրաստման և արդյունավետ մասնակցության համար:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

ՄԱՍ Ա

Ուժը կորցրած հրահանգներն իրենց հաջորդական փոփոխություններով (նշված 22–րդ հոդվածում)

Խորհրդի 96/61/ԵՀ հրահանգ
(ՊՏ L 257, 10.10.1996 թ., էջ 26):

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003/35/ԵՀ հրահանգ
(ՊՏ L 156, 25.06.2003 թ., էջ 17):
միայն 4-րդ հոդվածը և 2-րդ հավելվածը

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003/87/ԵՀ հրահանգ
(ՊՏ L 275, 25.10.2003 թ., էջ 32):
միայն 26-րդ հոդվածը

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1882/2003 կանոնակարգ (ԵՀ)
(ՊՏ L 284, 31.10.2003թ., էջ. 1).
միայն 3-րդ հավելվածի 61-րդ կետ

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 166/2006 կանոնակարգ (ԵՀ)
(ՊՏ L 33, 04.02.2006թ., էջ 1).
միայն 21(2) հոդված

ՄԱՍ Բ

Ազգային իրավունք փոխատեղելու ժամկետների ցանկը (22-րդ հոդվածով նախատեսված)

Հրահանգ	Փոխատեղման ժամկետը
96/61/ԵՀ	Հոկտեմբերի 30, 1999թ..
2003/35/ԵՀ	Հունիսի 25, 2005թ.
2003/87/ԵՀ	Դեկտեմբերի 31, 2003թ.

ՀԱՎԵԼՎԱԾ VII

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

96/61/ԵՀ հրահանգ	Սույն Հրահանգը
Հոդված 1՛	Հոդված 1
Հոդված 2, ներածություն	Հոդված 2, ներածություն
Հոդված 2 (1-9)	Հոդված 2 (1-9)
2(10)(ա) հոդված	2(10) հոդված
Հոդված 2 (10)(բ)	Հոդված2(11)
Հոդված 2(11), առաջին ենթապարբերություն, ներածություն	Հոդված 2(12), առաջին ենթապարբերություն, ներածություն
Հոդված 2(11), առաջին ենթապարբերություն, առաջին պարբերույթ	Հոդված 2(12), առաջին ենթապարբերություն, (ա)
Հոդված 2(11), առաջին ենթապարբերություն, երկրորդ պարբերույթ	Հոդված 2(12), առաջին ենթապարբերություն, (բ)
Հոդված 2(11), առաջին ենթապարբերություն, երրորդ պարբերույթ	Հոդված 2(12), առաջին ենթապարբերություն, (գ)
Հոդված 2(11), երկրորդ ենթապարբերություն	Հոդված 2(12), երկրորդ ենթապարբերություն
Հոդված u2(12)	Հոդված 2(13)
Հոդված 2(13)	Հոդված 2(14)
Հոդված 2(14)	Հոդված 2(15)
Հոդված 3, առաջին ենթապարբերություն	Հոդված 3(1)

Հոդված 3, երկրորդ ենթապարբերություն)	Հոդված 3(2)
Հոդված4	Հոդված4
Հոդված 5	Հոդված 5
Հոդված 6(1), առաջին ենթապարբերություն, ներածություն	Հոդված 6(1), առաջին ենթապարբերություն, ներածություն
Հոդված 6(1), առաջին ենթապարբերություն, առաջինից տասներորդ պարբերույթներ	Հոդված 6(1), առաջին ենթապարբերություն, (ա)–(ժգ)
Հոդված 6(1), երկրորդ ենթապարբերություն	Հոդված 6(1), երկրորդ ենթապարբերություն
Հոդված 6(2)	Հոդված 6(2)
Հոդվածներ 7-12	Հոդվածներ 7-12
Հոդված 13(1)	Հոդված 13(1)
Հոդված 13(2), ներածություն	Հոդված 13(2), ներածություն
Հոդված 13(2), առաջինից չորրորդ պարբերույթներ	Հոդված 13(2)(ա)–(դ)
Հոդված 14, ներածություն	Հոդված 14, ներածություն
Հոդված 14, առաջինից երրորդ պարբերույթներ	Հոդված 14(ա) –(գ)
Հոդված 15(1), առաջին ենթապարբերություն, ներածություն	Հոդված 15(1), առաջին ենթապարբերություն, ներածություն
Հոդված 15(1), առաջին ենթապարբերություն, առաջինից երրորդ պարբերույթներ	Հոդված 15(1), առաջին ենթապարբերություն, (ա)–(գ)
Հոդված 15(1), երկրորդ	Հոդված 15(1), երկրորդ ենթապարբերություն

ենթապարբերություն	
Հոդված15(2)	Հոդված15(2)
Հոդված15(4)	Հոդված15(3)
Հոդված 15(5)	Հոդված 15(4)
Հոդված 15ա, առաջին ենթապարբերություն, ներածություն և եզրափակիչ դրույթներ	Հոդված 16(1)
Հոդված 15ա, առաջին ենթապարբերություն, (ա) և (բ)	Հոդված 16(1)(ա) և (բ)
Հոդված 15ա, երկրորդ ենթապարբերություն	Հոդված 16(2)
Հոդված15ա, երրորդ ենթապարբերություն, առաջին և երկրորդ նախադասություններ	Հոդված 16(3), առաջին ենթապարբերություն
Հոդված 15ա, երրորդ ենթապարբերություն, երրորդ նախադասություն	Հոդված 16(3), երկրորդ ենթապարբերություն
Հոդված15ա, չորրորդ ենթապարբերություն	Հոդված 16(4), առաջին ենթապարբերություն
Հոդված 15ա, հինգերորդ ենթապարբերություն	Հոդված16(4), երկրորդ ենթապարբերություն
Հոդված 15ա, վեցերորդ ենթապարբերություն	Հոդված 16(5)
Հոդված 16	Հոդված 17
Հոդված 17	Հոդված 18
Հոդված 18(1), ներածություն և եզրափակիչ դրույթներ	Հոդված 19(1)

Հոդված 18(1), առաջին և երկրորդ պարբերույթներ	Հոդված 19(1)(ա) և (բ)
Հոդված 18(2), առաջին ենթապարբերություն	Հոդված 19(2)
Հոդված 18(2), երկրորդ ենթապարբերություն	Հոդված 19(3)
Հոդված 19	—
Հոդված 20(1)	Հոդված 20(1)
Հոդված 20(2)	Հոդված 20(2)
Հոդված 20(3), առաջին ենթապարբերություն	Հոդված 20(3), առաջին ենթապարբերություն
Հոդված 20(3), երկրորդ ենթապարբերություն	—
Հոդված 20(3), երրորդ ենթապարբերություն	Հոդված 20(3), երկրորդ ենթապարբերություն
Հոդված 21(1)	—
Հոդված 21(2)	Հոդված 21
—	22–րդ հոդված
Հոդված 22	Հոդված 23
Հոդված 23	Հոդված 24
Հավելված I	Հավելված I
Հավելված II	Հավելված II
Հավելված III	Հավելված III

Հավելված IV	Հավելված IV
Հավելված V	Հավելված V
—	Հավելված VI
—	Հավելված VII

---

(1) ՊՏ C 97, 28.04.2007թ., էջ 12:

(2) Եվրոպական պառլամենտի 2007 թվականի հունիսի 19-ի եզրակացություն (դեռևս հրապարակված չէ Պաշտոնական տեղեկագրում) և Խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 17-ի որոշում:

(3) ՊՏ L 257, 10.10.1996թ., էջ 26: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 166/2006 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 33, 04.02.2006թ.., էջ 1):

(4) Տե՛ս Հավելված VI, մաս Ա:

(5) ՊՏ C 138, 17.05.1993թ., էջ 1:

(6) ՊՏ L 188, 16.07.1984թ., էջ 20: 91/692/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48):

(7) ՊՏ L 64, 04.03.2006թ., էջ 52:

(8) ՊՏ L 175, 05.07.1985թ., էջ 40: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003/35/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 156, 25.06.2003թ., էջ 17):

(9) ՊՏ L 159, 29.06.1996թ., էջ 1:

(10) ՊՏ L 117, 08.05.1990թ., էջ 1: Վերջին անգամ Հանձնաժողովի 2005/174/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 59, 05.03.2005թ., էջ 20):

(11) ՊՏ L 106, 17.04.2001թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 1830/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 268, 18.10.2003թ., էջ 24):

(12) ՊՏ L 114, 27.04.2006թ., էջ 9:

(13) ՊՏ L 309, 27.11.2001թ., էջ 1: Խորհրդի 2006/105/ԵՀ հրահանգով (ՊՏ L 363, 20.12.2006թ., էջ 368) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

(14) ՊՏ L 10, 14.01.1997թ., էջ 13: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1882/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 284, 31.10..2003թ., էջ 1):

(15) ՊՏ L 275, 25.10..2003թ., էջ 32: 2004/101/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 338, 13.11.2004թ., էջ 18):

(16) ՊՏ L 41, 14.02..2003թ., էջ 26:

(17) ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48: Վերջին անգամ թիվ 1882/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ:

(18) ՊՏ L 182, 16.07..1999թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 1882/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ:

(19) ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 20: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 166/2006 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 33, 04.02.2006թ., էջ 1):

(20) ՊՏ L 194, 25.07.1975թ., էջ 23: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000/76/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 332, 28.12.2000թ., էջ 91):

(21) ՊՏ L 140, 05.06.2009թ., էջ 114: